



Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ*

(14-րդ դար)

7. ԷԶԵՐ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կենսագորական տվյալների նման սեղմ, հակիրճ չեն, քարհրախտաբար, Սարգիս Պիծակի նկարչական ժառանգության վերաբերյալ տեղեկությունները: Մի շարք ձեռագիր մատյաններում պահպանվել են զրչի և վըրձինի ստեղծագործությունները, տրոնց հիման վրա կարելի է գծել Պիծակի: անցած նկարչական ուղին, ծանոթանալ նրա արվեստի էլուժյան, ոճի առանձնահատկությունների հետ, որոշել նրա վրձինի վարպետությունը, նրա տեղն ու դերը Հայ նկարչության մեջ:

Նշենք և ամեն, որ արվեստագիտի նկարչական ստեղծագործության շոշանն ընդգրկում է 1307—1353 թվականները: Այդ ժամանակաշրջանում վաստակավոր մանրանկարիչը վրձինել է բազմաթիվ ձեռագրեր, որոնց նկարները, իրանց բավանդակությամբ ու բնույթով, բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ աշխարհիկ և կրոնական: Ուշագրավ է նաև այն, որ իր մի շարք մանրանկարներով Սարգիս Պիծակը սերտորին կապված է 12—14-րդ դարերի վերածնության շրջանի հայ աշխարհիկ ուղղության լավագույն ավանդությունների հետ: Մի շրջան էր դա, երբ երկրում ստեղծված տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների հետևանքով հանդես են գալիս նոր գրական

դիմքեր և իրենց ստեղծագործությունների մեջ, նախկին տիբապկառող կրոնական մոտիվների փոխարեն մտցնում են աշխարհիկ բովանդակություն: Երգում են նրանք բնությունը, գինին ու սերը, պատկերում են ժողովրդի տնտեսական և իրավական դրությունը:

Այդ նոր շարժման տաղանդավոր արտաշայտիչները հանդիսանում են առակագիրներ Միխիթը Գոշը, Վարդան Այգեկցին, բանաստեղծներ Նիրսիս Շնորհավին, Կոստանդին Երզնկացին, Ֆրիկը, իսկ նկարչական ասպարեգում փայլում են Թորոս Ռուսինի հետ Սարգիս Պիծակը և ուրիշներ: Աչա թե ինչո՞ւ Պիծակի մի շարք նկարները կաղմում են Հայ մանրանկարչական հին արվեստի թանկագին էշերը:

Վաստավագոր արվեստագիտի նկարչական մշակությը պատկերող ամենավին ձեռադիրը № 2566—11 ավետարանն է, որի գրիչն է Պիծակը քահանան, իսկ նկարիչը՝ Սարգիս Պիծակը, գրչի որդին: Զեւագիրը գրվել է 1301 թվականին, որ թագաւորութեան աշխարհիս Կիլիկիոյ Լևոնի, որ ի սովն ամի աւծաւ, որդոյ պարսին թորոսի, որդոյ արքային Լևոնի (Լևոն Գ. թագավորն է: Ա. Ե.), իսկ Պիծակը նկարագարդել է 1307 թվականին:

Նկարչի վրձինած ձեռագրերի լավագույն և ամենաճիշտ ստեղծագործություններից մեկը պիտի համարել այժմ Երևանի պետական ձե-

* Շարունակած ամսագրի 1953 թվականի սեպտեմբերի և հոկտեմբերի համարներից:

ռագրատան մեջ գտնված Ծովինյան Օշին
թագավորի ավելացրանը, գրված՝ 1313 թվա-
կանին Սիս քաղաքում, մի ճարտար գրիչէ»¹²:
Այդ գրչագիրը Հայոց արքան, 1320 թվակա-
նին, Սիրաստիայից իրեն այցելության եկող
Ստուփանու եպիսկոպոսին է նվիրում: Այս
մասին Գիշատակարանում կարդում ենք.



Առաջ Ղուկասու
Մանրանկար Սարգիս Պիծակի

«...իսկ բարեփաշտ արքայն Աւլիքին կամեցաւ պարզին ընձեռել իմս նուաստութեան, և ես զմաղմնաւոր գոյս առ ինչ ոչ համարեցայ, այլ եռափափակ սիրով ըղձացայ կինաց քարոզիս և բարձր պատուիրանիս աստուածապատօւմ առըք աւետարանիս Եւ հրամանաւ արքայի մտայ յարկեզս տանն, ուր համարեալ կային սուրբ կտակարանքն, և թէպէտ և պատահեցայ բաղմաց և զանազանից, այլ ընդ առ հաձեցայ, զոր էր զրեալ արագ և գեղիցկասպիր գրշի և բազմիքանկ ծաղկեալ զարդարեալ յոդնահանճար նկարակերտի, այլ ոչ յաւառ հասուրեալաց¹³;

Զերագի նկարագրությունը՝ լրացնում է սարսակը քահանայ՝ Սարգիս՝ մականուն

12. Հղիատակարանի առաջին մասը զգել է Հայրապետության գրիշը, իսկ շարունակությունը՝ Ստեփանոս Եղիազարյանը:

13. Կղիկին մանրանկարչական գպրոցի բավարարությունը արժեքաբավոր ձևուագրերից մեկն է այս ալիսարանը, որ վրձնինել են Սարդին Պիծակը և այլ առանձինավոր նկարիներ:

Պիծակ», որ օրպազմ աշխատութեամբ նկարագրելուց հետո, եպիսկոպոսից աշխատավարձ է ստանում . 1.300 դրամ։ Ահա՝ Ստեփանոս եպիսկոպոսի վկայությունը։

«...Եւ զսի զսրբաէց քահանայ՝ զՄարդիւ մականուն Պիծակ, բոյժ հմուտ նկարագրութիւնն, և տուեալ իմ ի հալալ արդինաց իմոց Ռ և Յ (1.300) դրամ, և նայանձն էաւ, և բազում աշխատաթեամբ կատարեաց և ելից զպակասութիւնն տակինկար պատկերացն որ ի սմա, զոր ընկալայ լիստուծոյ և զուարձացայ ներքին մարդովն... Արդ, եղեւ զրաւ սորա ի թվ. Հայոց Զկթ. (1320), ի գառն և ի դմնեայ և յանբարի ժամանակի... փ հայրապետութեան Տեառն Կոստանդիայ Կիսարացոյ և յարքայտթեանն Աւշինի արքայի... Եւս առաւել յիշեսոչիք զառացին աշխատազրն՝ զգծաւոն և գծաղկաւոն, և զվերքին աշխատողն՝ զՄարգիս քահանար...»:

Արդարեւ, ձեռագիրը Նկարազարդելու համար Պիծակը զործադրում է իր լավագույնը և Հայ Նկարչության նվիրում մի վեղեցիկ ստեղծագործություն։ Ահա՝ Նկարչի վկայությունը.

«Յոյժ աշխատեցայ ի յսկեն և ի ծաղկեն և ի համարաբառն, ի յաւեռարան-չերն և ի խորնին (խորանն), նաև ի պիտաղըն, ոչ ուժք սարգամ է»:

Այդ մանրանկարների նորությունն ու վեհ-
չությունը վիճապեմ են Պիծակի վրձինի հըմ-
տութան մասին:

Սարգսի Պիծակի նկարչական արվեստի առաջին շրջանի ստեղծագործության մի այլ պատկեր տեսնում ենք «Մասեր Հին Կտակարանի» և նոր Կտակարանի խորադրով՝ մագաղաթյա, մեծադիր և ճոխ նկարագործ ձեռագրում, որ գտնվում է Երևանացի վանքում։ Դա հայոց 928 (1323) թվականին, Սիսմայրաքաղաքում, Գրիգոր Երեցի գրչով շարահյումած ձեռագիրն է, որը ուշագույնից են զբաղվում Սարգսի Պիծակի հմտությունը նկարված խորանները, կիսալսորանները, բաւանցավաբդերը, չորս ավելարանների նկարները, թաշնագարքերը, միծութաքրիստոնեական պատկերները և լազարիթ, կարմիր, կապույտ, կանաչ, նարնջագույն, ոսկի և այլ երանգներն, իրենց գեղեցիկ նիկութակությամբ, ձեռագրին ո՞չ միայն առանձին գրավություն են տալիս, այլև նշան են Կիլիկյան նկարչական գորոցի նվաճումների մասին։

Զենոպի մանրանկարների մեջ էլեւում է նկարչի՝ Սարգսի արեղայի ինքնանկարը, որ ճնշադիր և խոճովն հայցքով նայում է. Հաղին՝ Վեղար ու փիլոն։ Նկարի քառանկյունների վրա կարդում ենք հնատելիություն։

«Ձոտէր Ստեփանոս առ քեզ ընկալ,
Զի յոյժ սիրով ետ զսա գրեալ,
Առ յիշատակ իւր մնալ,
Գրիպոր գրիշն է յանդ ելեալ,
Սարգիս ծաղկողն է զարդարեալ»:
Զեռագրի 984ա էջում գրված գլխավոր հի-
շատակարանում կան այսպիսի թանկադին
տեսակներուն։

«...ի թուակնութեանս Հայոց 928
(1323 թ.), ի թագաւորովթեան Հայոց կոտ-
նի որդուոյ Աւշին թագաւորի, որ է մանուկ
հասակաւ և կատարիեալ իմաստովթեամբ, և
ի հայրապետովթեան Տեառն Կոստանդիեայ,
որ այսմ ամի նստաւ յաթոռ հայրապետու-
թեան հայոց ի մայրաքաղաք Սիս, ըստ
հովանեաւ սրբոյն Գրիգորի հայոց կուսա-
ւորչի Զեռամբ իմով անարհեստ գրչի և
մեղաւոր երիցու Գրիգորի, որ ձեռն արկի,
յայսպիսի գործ, ի վեր էր քան զկար իմ
և զափութիմ տկար մտաց իմոց և ան-
արհեստ գծի. և առաւել զի ի մէջ մեծի
տրտմովթեան յաղագս դամնութեան ժամա-
նակիս. քանզի յայսմ ամի առաւ մայրա-
քաղաքն Այս ամրոցաւքն իւրովք յանաւ-
րէն ազգին Խսմայիլացտց: Եւ մեք տարա-
բերիմք յահ և երկիւղ իւր ի բքաբեր հող-
մոց ալեկոծեալ նաւ ի մէջ ծովու և մնամք
Տեառն աւոխութեան»:

Սառակա այցանութեամաս։
Մի տարի անց Սարգիս Պիծակը նկարչական արվեստին նույրում է մի նոր նկարագործ ձեռագիր։ Դա Հայոց ԶՀԿ (1324) թվականին, Սոսում, Օշխա գրքի, բամբակյա թղթի վրա դրած շարականն է։ Զեռագիրը թերթիւնին գրավիլ են մեծ մասը մանուշակի կարմիր պարզ ծաղկումներով սկզբնատառեր, ոսկեղին, կարմիր, լազուլիտ և այլ երանգների հիմաքանչ ներդաշնակությամբ գծված երկու խորաններ և յոթը կիսախորաններ և նույրը ու վարպետ վլաճինով նկարված երկու մանրանկարներ, որոնք պատկերում են Սարգիս Պիծակի նկարուական ուսորոցի տառեր էջեռու

Զենադիթ 739-ը էջում գտնվում է պղիս-
վոր հիշատակարանը, ուր արձանադրված են
այսպիսի արժեքավոր տոռեր.

«Փառք Ամենասուրբ Երրորդովթեան և
միոյ Աստուածովթեան, Հաւոյ և Որդուոյ և
Սրբոյ Հոգովոյն, այժմ և միշտ և յափ-
տեանս: Ցեղն հարկու և կթանասուուն և Գ
ամի (229—1324) զրեցաւ շարակնոցս
ի թագաւորովթեան Հայոց Աւոնի և ի հայ-
րապետովթեան Կոստանդիեայ, ձեռամբ Ալշ-
նի սպասարկի բանի, ի քաղաքս ի Սիս:
Ընդ հովանեաւ Լուսատորչին Հայոց Սրբով
Գրիգորի: Ի վայելումն սարկաւագին Գրի-
գորի: Արդ աղաւեմ ամենեսեան, որք հան-
դիպիք գրոցս, յիշեցէք զատացող սորա
զԳրիգոր և զճնողսն իւր Նաե զանարժան

գրողս և Աստուած ձեզ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի և նմա փառք յափտանս ամէն: Ընդ նմին և զիս զանարժան սուտանում բահանայ զՄարգիս և հանգուցեալ հայրն իմ՝ զԴրիգոր քահանայն և զգնողմն իմ աղաչիմ յիշելի սուրբ աղաւիթ ձեր, որ ծաղկով և տսկով զարդարեցի զսուրբ տառս զայս և որ յիշէ զիս բարի մտաւը և մեղաց թողովթիմ խնդրէ, Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարիեաց, ընդ միոյն հազարապատիկ պարզեցէ ձեզ և մեզ ամէն: Ամէն»:

Պիծակի անհայտ մեացած նկարչական
արվեստի մի այլ ուշագրավ էջը 1325 թվա-
կանին Թորոս Կլայեցի (Հռոմկլայեցի) գրչի
կողմից ընտիր բլուրագրով գրված մագա-
լաթյա ձեռագիր շաղականն է, որը նկարա-
գրդել է Պիծակը: Այս արժեքավոր ձեռագրի
հայտնաբերման համար պարտական ենք
Ֆարեգին արքեպիսկոպոս Հովսեիյանին, որ
յուու-Ցորքի ժնոր Գիրյ Հանդիսում (1944 թ.,
№ 1) ստորագրել է «ՍԻ Վարձոր ձեռագիր
յոյու-Ցորքի Հանրային մատենագրանում»
ստորագրով մի լուզ հողված, ուր Գիրյ տնե-
ալով Սարգսի Պիծակի ոճն ու արվեստը,
զղակացրել է, թի նա է ձեռագրի գրիչը:
յութը զարդարում են նաև 12 լուսատիպ
հանրանկարներ: Հայ արվեստի և մշակույ-
թի պատմության համար ձեռագիրն ուրում
որժիք է ներկայացնում: Սանրանկարներից
շադրություն են գրավում ներսին Շնորհա-
նի հոմական զգեստավորությամբ, Պետրո-
սորավարը զինվորական զգեստով, վահանով
նեսակում:

Պիծակի գրչական և նկարչական արվեստի մի այլ գեղեցկությունը 1330 թվականին գրած ձեռագիրն է, որ այժմ գտնվում է Երևան պետական մատենադարանում։ Դա «Մանրուամունք» գրչագիրն է, որի հիշատակարաններում նկարչի մասին կարդում ենք կենսագրական սեղմ տվյալներ։ Ահա՝ այդ արժեքավոր տողերի պատճենը

«Գրեցաւ եղանակատր տառս, որ կոչի
մանրուսումն, փ թուակնանիս Հայոց ԶՀԲ.թ.ին
(1330), ձեռամբ Սարգսի նուաստ և ան-
արժան քահանալի, ի խնդրոյ պատուա-
կան և երջանիկ կուսակրամ քահանալի
Տիրացուի, ի վայելումն անձին իւրոյ և ի
յիշատակ համարէն ազգականաց իւրոց,
ի թագաւորութեանն Առանի Հայոց, որդոյ
արքային Հայոց Աւանի, և փ հայրապետու-
թեան Տեառն Յակովայ: Արդ, աղաչեմ
զամեննեսեան, որք աւգտիք ի սմանէ ուս-
մամբ կամ աւրինակ վճելով, յիշեցէք փ
մեղաց թողութիւն... զեղկելի գրաւղ սորին,
ծաղկաւզ և ոսկաւզ՝ Սարգիս նուաստ քա-
հանալի... զՍարգիս անարժան քահանալի, և

դհայրն իմ Գրիգոր քահանայ, և զմայրն իմ Հեղինէ, և զբոյրն իմ զգնացեալսն առ Քրիստոս, աղաշեմ յիշել ի սուրբ աղաւիս ձեր, և որ յիշէ, յիշեալ լիցի, ամէն»:

Նկարչի վրձինած ձեռագրերի մեջ ուրուն տեղ է գրավլում 1331 թվականին, Լևոն Դ. արքայի հրամանով, Սմբատ Գոնզաստարի համար գրած և նկարած «Դատաստանագիրքը: Այդ հազվագյուտ ձեռագիրը, որ միշնադարյան հայոց իրավունքի պատմության համար կարևոր աղբյուր է, գտնվում է Վենետիկ, Ս. Ղազարում և իր մանրանկարներով Սարգիս Պիծակի արվեստին պատճիվ է բերում: Այդ նկարների մեջ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում նկարչի վրձինի ստեղծագործությունների պատճիկը կազմող Լևոն Դ. թագավորի պատկերը, որ ներկայացնում է դատաստան անելիս: Նկարին առանձին դրավշումնելուն է տալիս ներդաշնակ գույների երաժշտությունը, ուր իշխում են ոլխավորապես ոսկեզօծ, մուգ և բաց կարմիր, կապույտ, բաց և մուգ-սրճադույշ, մուգ-սպիտակ և այլ երանդները:

Այդ նկարը միաժամանակ անցյալի նկարչական հարուստ ժառանգության թանկագին մի նմուշ է, ուր Պիծակը պատկերել է մանրանկարչության զարգացման հանգուցային որոշ հարցերը՝ նկարչական տւղության, ձեփի, բովանդակության, ոճավորման և այլ հիմնական խնդիրները: Այստեղ նկարիչը հանդես է գալիս ո՛չ միայն որպես տաղանդավոր իրապաշտ մանրանկարիչ, այլև լավագույն դիմանկարիչ, պայծառ ազգագրական և հմուտ ոսկող:

Զեռագրի հիշատակարանում կարդում Խնք Հետեւյալ բնորոշ տողերը.

«...Գրեցաւ անսիդք Անտաքոյն և նաւուս և կանոնք ընթանրական նկեղեցական: և աշխարհայնոց և փուանկաց և ամենայն ազգաց փ մի տեղ հաւաքեալ վասն իրաւանց և դատաստանաց, ի թուաբերութեանս Հայոց Զայց (99 (1331), ձեռամբ Սարգիս նուաստ և անարժան քահանայի և ոսկաւդի: Որ և Հրամայիհաց ամենաբարի թագաւորն Հայոց Լևոն՝ որդի ի Քրիստոս Հանդուցեալ թագաւորին Հայոց Աւշին, վասն դրոց դատաստանաց, որ գրեցան ի յիշատակ մնալոց յափուեան: Արդ, աղաշիմ զամենեսեան, որք ալկտիք ի սմանէ կամ աւքինակէք, յիշեցէք ի բարին Քրիստոս զամենացարի թագաւորն Հայոց և ի Քրիստոս Հանդուցեալ զննաւզմն իւր՝ զուրբ արքայն Հայոց Աւշին և զամակէ թագուհին իւր, և զամենայն արիան մերձաւորն իւր, ընդ նմին և զգող և զոսկող այսմ գրացու, և որ յիշէ, Քրիստոս Աստուած զինքն յիշէ, ամէն»:

Նույն 1331 (99) թվականին՝ նկարիչը դրում է և նկարագրում մի այլ ձեռագիրը: Դա այժմ Երևանի պետական մատենադարանում հանդող շարավինոցն է, որի հիշատակարանում ընդգծված են արվեստագիտի, իր ծնողների և քուջ անունները: Ահա՝ հիշատակարանի էական մասը.



Սոլոմոն Իմաստուն

Մանեանկար Սարգիս Պիծակի

(Հայկ. ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

«...Գրեցաւ եղանակաւոր տասս ձեռամբ բազմամեղ և անարժան սուտանուն քահանայի Սարգիս, ի թուաբերութեանս Հայոց Զայց (99 (1331), ի թագաւորութեանս Լևոնի բարեպաշտի, որպոյ արքային Հայոց Աւշին, և ի Հայրապետութեան Տեառն Յակովայ, ի խնդրոյ պատուական և երջանիկ սարկաւագին Սարգիս, որ ստացաւ զսայ յարդար վաստակոց իւրոց և ի յիշատակ զուրոյ իւր և ծնողաց իւրոց վասլի և թագուհի: Արդ, աղաշեմ զամենեսեան, որք աւքտիք ի սմանէ և կամ ընդարձինալիք, յիշեցէք ի բարին Քրիստոս զամանացարեալ պատուական սարկաւագն Սարգիս... Ընդ նմին և զիս՝ զանարժանս՝ զՍարգիս նրաստ քահանայ, զգրիչ առար տառիս, և զանդուցեալ հայրն իմ՝ զԳրիգոր քահանայն, և զմայրն իմ Հեղինի, և զքոյրն իմ Բենիամ-

նաւ՝ զգնացեալսն առ Թրիստոս, և զամենայն ազգայինս իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս. և որ յիշէ և սրտի մտաւը մեղաց թողություն խնդրէ, նա ընդ միոյն հարիւրապատիկ առցէ ի Թրիստոսէ Աստուծոյ, յուսոյն մերոյ, ամէն, և հազար ամէն»:

Ահա՝ Պիծակի վրձինի մի այլ ստեղծագործությունը, որ հանգչում է նույնական նուեանի ձեռագրատանը: Դա Հակոբ Բ. կաթողիկոսի Աստվածաշունչն է, նկարչական արվեստի մի թանկագին վավերագիր, որի նկարների մեջ կենտրոնական տեղ է գրավում կաթողիկոսի պատկերը: Գրչագրի գեղարվեստական մանրանկարները, որոնք գծած են Պիծակի վրձինով, հայ արվեստի մի գեղեցիկ էջն են կազմում:

Պիծակի նկարագրագած լավագույն ձեռագրերից մեկն է նաև 1331 թվականին Դրագարկում գրված ավետարանը, որ այժմ գտնվում է Վենետիկի — Ս. Ղազարի մատենադարանում: Այդ գրչագրի նկարների մեջ առանձմահատուկ տեղ են գրավում նկարչի ինքնանկարները — «Սարգիս Պիծակ քահանայ», և «Սարգիս Պիծակ արեղայ», որոնք տաղանդավոր արվեստագետի կերպարի, կենսագրության որոշ գծերի և տարազի հիտ ծանոթանալու համար թանկագին աղըյուրներ են: Այդ գրչագրում Պիծակը փայլում է ո՞չ միայն որպես տաղանդավոր մանրանկարիչ, ոճաբան ու դիմանկարիչ, այլև վարպետ ու կատարական Պիծակի արեղայ»:

Երուսաղեմի վանքի մատենադարանում առանձին գուրգուրանգուլ ու խնամքով պահվում է Սարգիս Պիծակի գրչական և նկարչական արվեստի մի այլ լավագույն գործը: Դա № 2649—94 ձեռագիր ավետարանն է, որ 1332 թվականին, Լեռն Դ. ի թագավորության շրջանում, տաղանդավոր նկարիչը գրել է Սիս քաղաքում: Արծաթապատ և սուկեցրած գեղակերտ կազմով և ընտիր սպիտակ մազաղաթյա թանկագին այս ձեռագրի մեջը մյուսից գեղեցիկ սկզբանատառները, լուսանցազարդերը, պատմերները և մանրանկարները վկայում են վաստակավոր Պիծակի նկարչական դպրոցի էռովյան մասին: Ձեռագրի բազմիքնագ մանրանկարներից ուշադրության են գրավում նախ վարպետ վրձինով նկարած և ընտիր սպիտակ մազաղաթյա թանկագին այս մատառանում է Ղովասի կերպարը (էջ 324): Դա գեղեցիկ մի դիմանկար է. որի խարոյաշ, զանգուր, բայց ցանցառ մորուքը և դեպի վար թերված բեղը լրացնում են դեմքի պատկերը: Նստել է նա աթոռակի վրա, որի բաց-կապտագույն ներքնոցը և կարմիր թիկնոցը կազմում են նրա հազուսափառ ամբողջությունը: Նսկների վրա հանգչող բաց

ավետարանը բռնել է ձախ ձեռքով, իսկ աջով՝ գրիչը: Նկարի խորքը ոսկեգեղ է, իսկ շրջանակն եղերված է փոքր վարդերով: Ավետարանը ձախ ծնկան առջև ծնրադրել է սև մորուքով, երկու ձեռքերը դեպի ավետարանիշը պարզած մի այլ կերպար: Դա ձեռագիրն ստացող Գրիգոր քահանան է, որ նայում է պայծառ ու հանգարտ, բայց աղերսող հայցքով: Հագել է կապտագում վերարկու և կործքը կոմիկած մանիշակագում մի փիլոն: Մանրանկարի տակ կարդում ենք. «Ո՞վ սուրբ Ղովաս, Գրիգոր քահանայ քեզ ի յանձին»: Նշենք նաև Ղովասի խորանն՝ իր նուրբ ծաղկումը և տերենների վրա կոկոնած և 26 գեղեցիկ վարդերով: Մանրանկարչական տարբեր գեղեցկություններ են նաև ձեռագիր բոլոր գլուխների ճոխ երանդագույն վրձինած գարդագիր կամ թռչնագիր սկզբանատառերը: Ավետարանին առանձին գրավչություն են տալիս նաև նուրբ բաւանցազարդ մանրանկարները, որոնք պատկերում են Քրիստոսի կյանքի դեպքերը — Ֆիուսի Ծնուանքը, Հովհաննես Մկրտիչը, Մկրտությունը, Օգոստոս կայսր՝ բազմած գահի վրա թագվորական տարագով և այլն:

Ձեռագրի մի այլ հատկանշական արժեքը արծաթապատ ընտիր կազմն է, որի վրա քանդակված խմբանկարները պատկերում են Հիսուսի կյանքի ֆիմնական էջերը: Այնտեղ դարերի խորքից նայում են մոգերը, հովհեները, շորս ավետարանիները և այլ կերպարները: Բարձրագանդակ, ուսուցիկ այդ նկարները 14-րդ դարի հայ տակերչական արվեստի ստեղծագործություններ են, որոնք ցայտուն գաղափար են տալիս Կիլիկյան դարաշրջանում զարգացած նրբարվեստ ոսկերչության մասին: Արծաթապատ կազմի եղերագարքի արտաքին շորս շրմների վրա կարգացվում են հետեւյալ տողերը.

«Քահանայք զա կարգացէք,

Զեկեղեցին բանիւ լցէք.

Եւ զբարձրեան Քրիստոս աղակացէք,

ԶԳրիգոր Երէց յորդաւաքն լիշեցէք:

Թվ. ԶԶԳ (1334):

Ձեռագրի հիշատակարանից ուշագրավ են հետեւյալ տողերը.

«...Վասն որոյ ձեռն ի զործ առեալ անարժան այսմ իրի մեղսամակարդ անձն Սարգիս նուաստ և սուստանու քահանայ և ըստ տոսեցելոյ աւտնականութեան ի Քրիստոսէ, զինցի և յաւարտ հանի զատուածունակ բանքս վատկր աւետարանս յայսպիսի ընտիր և ուղիղ աւրինակէ, ի թուխ Հայոց ԶԶԱ (1332) ամին, ի քաղաքս Սիս, ընդ հովանեաւ Ս. Հովում և այլ բազմահաւաք սրբոց որք և աստ են: Ի հայրապետութեան Տեառն Գրիգորի. և ի քաղ-

որութեան կեռն չորրորդի՝ որդույ Աւշնի Հայոց արքայի, յայսմ ամի պասկեցաւ ընդ ֆրանգ թագուհին Թագաւորն Աւան... Ընդ նմին և զիս, զանարժան սուտանուն քահանայ, զՍարգիս՝ զգուղիկ սուրբ աւետարանիս և զոսկաւ, զի. յոյժ իմ աշխատեալ և կարողավեամբ Քրիստոսի յանկ հանեալ աւարտեցի և զծնաւլն իմ զԳրիգոր քահանայ և զՀեղինէ և զքոյրն իմ Թիգանաւ զգնացեալսն առ Քրիստոս. և զընկերն իմ և զամենայն մերձաւորսն իմ և զաշակերտն իմ Յակոբ և որ զմեզ յիշէ և սրտի մտաւք մեղաց թողովիմ խնդրէ, նա Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ընդ միոյն հարիւրապատիկ և ձեզ և մեզ պարգիւեսցէ և ինքն աւքնեալ է յափիտեան. ամէն, ամէն և հազար ամէն»:

Հայոց Զօր (1333) թվականին, «ի թագաւորութեան կեռնի բարեպաշտի որդույ արքայի Հայոց Աւշնի», Սարգիս Պիծակը Սիս մայրաքաղաքում գրում է և նկարագարդում մի նոր ձեռագիր. Դա շարակնոցն է: Ընտիր մագաղաթի վրա, հստակ և սիրուն բոլոր գրով զրած այս ձեռագրի զեղեցկությունը կազմում են թոշնագիր և ոսկեզօծ սկզբանառութեան և բազմաթիվ ու ճախ լրսանցազարդերը: Հիշատակարանի հական մասերն են.

«Փառք... Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգսի բազմամեղ քահանայի ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Հոգույն, ի լաւ և յընտիր աւրինակէ... ի թուաբերութեան Հայոց Զօր (1333), ի թագաւորութեան կեռնի բարեպաշտի որդույ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակովայ: Արդ, աղաւէմ զամենեսեան, որք աւգութիք ի սմանէ... յիշեցէք... զիս զանարժան զՍարգիս սուտանուն քահանայ և զծնաւլն իմ զԳրիգոր քահանայ և զՀեղինէ և զքոյրն իմ Թիգանս, զգնացեալսն առ Քրիստոս և զամենայն ազգայինս իմ զկենդանիս և զհանգուցեալս. զի յոյժ աշխատանաւք գրեցի և ոսկով և ծաղկիւ և պատկերով զարդարեցի զսա և որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն»:

Ձեռագիրը գտնվում է Պ. Մովսիսյանի մոտ, Կալիֆորնիայում:

Ահա՝ վաստակավոր մանրանկարչի վրձինած մի այլ ձեռագիրը, Դա շարականն է, որ գտնվում է ներկայումս Երուսաղեմի Արքոց Հակոբյանց վանքի մատենադարանում: Գրված է Հայոց Զօր (1335) թվականին, Սարգիս Պիծակի գրով, ինչպես ինքն է վկայում: «Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի»:

Գրշագրի էջերը զարդարող մանրանկարներ, որոնք արժեքավոր են իրենց գեղեցիկ սճավորումներով, ցայտում գաղափար են տալիս նկարչի արվեստի մասին: Ուրույն արժեք են ներկայացնում նաև ձեռագրի հիշատակարանները, որտեղ նկարչի հարազատների մասին կան կենսագրական այսպիսի տողեր:

«Փառք... Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի և



Ե Ա Բ Ե

Մանրանկար Սարգիս Պիծակի

(Հայկ. ՍՍՌ Գետական մատենադարանի ձեռ. № 2627)

Ճեղաւոր հողի, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ կոչի Խոռ Գրիգոր, ի մայրաքաղաքս Սիս... ի թուաբերութեանս Հայոց Զօր (1335), ի թագաւորութեանն Հայոց կեռնի չորրորդի որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ (էջ 333թ):

«Ո՞չ, զամենամեղ անձն իմ զՍարգիս անպիտան մեղուցեալ հողս, և զհանգուցեալ հայրն իմ զԳրիգոր քահանայի [անայ] և զմայրն իմ Հեղինի, և զքոյրն իմ զԹիգանս աւ, զգնացեալսն ի Քրիստոս, աղաւէմ յիշէլ ի սուրբ աղաւիս ձեր և որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն» (էջ 291թ):

«Զձեզ աղաշեմ հառաջելի,
Սուրբ քահանայի յամենայնի,
Ցիշման առնեք զիս արժանի,
ԶՄարգիս լցել մեղաւք ի լի,
Որ զուրբը տառս գրեցի
Եւ ծայր ի ծայր զարդարեցի:
Որ զմել յիշէ, յիշեալ լիցի,
Յարգայութիւն Քրիստոսի
Եւ իմ ծնաւլացն և ստացողի
Տէրն աղամիւք ձեր ողորմի» (Էջ 97թ):

Նշանավոր արվեստագետի նկարչական ստեղծագործության մի այլ պատկերը տեսնում ենք 1335 թվականին Կիլիկիայի Փոս անապատում վրձինված ավելուրանում, որը գտնվում է Երևանի պետական մատենադարանում: Գրլագի հիշատակարանում ընդգծված են հետեւյալ տողերը.

«Ընդ նմին և զիս՝ զանարքանս Սարգիս սուտանուն քահանայ, և զծն[աւղս] իմ, զամենայն ազգայինս իմ աղաշեմ յիշել ի Տէր, որ ծաղկիւ զարդարեցի զուրբ աւետարանս, և որ յիշէ յիշեալ լիցի, ամէն»:

1336 թվականին Սարգիս Պիծակը Սսում գրում է մի այլ ձեռագիր ավետարան, որի հիշատակարանում կարդում ենք հետեւյալը.

«... Արդ, եղի զրաւ գրչութեան սորա ի մայրաքաղաքն Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Հոգոյն և այլ բազմահաւաք սրբոց, որք աստ են, ի թուաբերութեանս Հայոց ԶԶԵ (1336) և աւարտեցաւ ի յամսեանն դեկտեմբերի իթ (29) աւրն, որ էր Կիրակէ, ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի, ի թագաւորութեանն լևոնի շորորդի, որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակովայը»:

Նկարչի վրձինի և գրչի մի ուրիշ թանկապին ավանդը ԶՂԱ (1342) թվականին Դրադարկի պատմական վանքում գրած և նկարագրադած մագաթյա ձեռագիր հազվագրուտ ավետարանն է, որ Կիլիկյան մանրանկարչության արվեստի մասին ցայտուն գաղափար կազմելու համար խիստ արժեքավոր մի վավերագիր է: Զեռագիրը Կոստանդնուպոլսում մի մասնավոր տան դարակից հայտնաբերեց երիտասարդ բանասեր Պերճ էրպանը և «Եղուրբ Փրկիչ» ամսագրում (Կոստանդնուպոլիս, 1950 թ., Ա. տարի, № 9) տպագրեց մի հոդված, 7 լուսատիպ նկարներով: Հիշատակարանի տողերում կարդում ենք.

«Գրեցաւ աստուածախաւ մատեանս... իմոյ անարժանիս՝ ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի. և մեղաւոր հողիս. ի թվաբերութեանս Հայոց ԶՂԱ (1342). ի հայրապետութեան Տն. Մխիթարյալ, և

յառաջնորդութեան սբ. ուստին Դրագարկու Տ. Բասիլիոսի. և ի թագաւորութեան Կոստանդիանոսի... յիշեցէք... և զիս անարժանս զՄարգիս սուտանուն քն. զգորդիկ սորա և զոսկաւոլ սբ. աւետարանիս և զծն. իմ գԳրիգոր քն. և զՀեղինի և զքոյրն իմ Թեֆանա»:

Սարգիս Պիծակի նկարչական արվեստի պատկերը գծելիս հիշենք նաև Երուսաղեմի վանքի մատենադարանում գտնված № 1973 ավետարանը, որի գրիչն է դեղագիր Ներսեսը, իսկ նկարները վրձինված են 1346 թվականին Պիծակի ձեռքով: Այդ մանրանկարների մեջ ուշադրություն է գրավում մի սիրուն դիմապատկերը: Դա հաշվելության առն ծովնկ չոքած Մարիուն թագուհին է, Կոստանդին Բ. արքայի կինը, որ իր ուրույն տարագով ո՞չ միայն նկարչական, այլև աղաքարական խոշոր արժեք է ներկայացնում:

Բազմավաստակ մանրանկարչի արվեստին պատիվ է բերում նաև այժմ Նյու-Յորքի Մորգանի մատենադարանում պահված № 622 «Յայսմաւուրգ»ը, Ագուիսի Ս. Թովմայի վանքում գտնված նաևկին գրչագիրը, որի կրոնական պատկերները, սկզբնագրդերը և լուսանցաղարդերը նկարչական արվեստի գեղեցիկ ստեղծագործություններ են: Գրված է Սսում, 1348 թվականին, «ի թագաւորութեան Հայոց Կոստանդնոյ աւաք մարագախտուա Հայոց Պալտինի»:

Հիշատակենք նաև Նյու-Յորքի հանրային մատենադարանում բազմած № 1489 ձեռագիր շարականը, որի նկարների նրբությունն ու բանաստեղծական պատկերավորությունը վկայում են Սարգիս Պիծակի նկարչական փայլուն տաղանդի մասին:

Բազմաշխատ արվեստագետի վրձինից հիշատակության արժանի է Հեթում Բ.ի Ճաշոցը, որի էջերը զարդարող այբունական գրերն իրենց նրբությամբ, գունագեղությամբ և շքեղությամբ գեղարվեստասերներին հիացմունք են պատճառում:

Նկարչի մանրանկարչական և գրչագրական գործունեության պատմությունը վերջանում է 1353 թվականին: Դա նրա ծերության շրջանն է: Այդ թվականին նաև Կիլիկիայում, վերջին անգամ, գրում է և «Ճայր ի ծայր» զարդարում մի ավետարան, որ այժմ գտնվում է Երևանի պետական մատենադարանում: Հմուտ վրձինով գծված ձեռագրի մանրանկարները գրավիչ են իրենց նրբությամբ, երանցների գեղեցիկ ներդաշնակությամբ և բանաստեղծական ոճավորությամբ:

Ահա՝ նկարչի գրչով գրված ուսանավոր հիշատակարանի էական մասը.

«Ի Հայոց Մեծաց թուականի,
ի յութ հարոյը՝ և երկու տարի (1353),
Կատարեցաւ սա ի կարգի
Զենամբ Սարգիս քահանայի,
Աւետարանս Քրիստոսի,
Ջոր բժշկեաց Տէրն ի յերկրի:
... Զամէն գլխոյ հետ իր գրեցի
Եւ ծայր ի ծայր զարդարեցի,
Ոսկով, ծաղկիւ, զամէնն ի լի
Եւ պատկերնով նոր է ի գրի:
... Արդ, ես նըաստս յամենայնի,
Սարգիս լրցեալ մեղաւք ի լի,
ի ծերութեան ժամանակի,
Աշխատութեամբ յաւարտ ածի»:

Պիծակի վրձինած աշխարհիկ կերպարներից ուշադրություն են գրավում «Հովհաններ»ը: Երկու ցայտոն դեմքեր են դրանք, մեկը կիլիկեցի պատանի հովիվ, մյուսը ծերունի, որի սրածայր մորուքը, արտահայտիչ աշքերը և պարզ, բայց ուրուզն տարազը առանձին գրավություն են տալիս նկարին: Հագել է նա մորթե զգեստ, թաթարական ոճով, մեջքին գոտի, իսկ գլխին սրածայր զիխարկ: Առօհասարակ, 14-րդ դարի կիլիկեցի հայ տիպարների և նրանց տիպիկ տարագների հետ ծանոթանալու համար մեծ արժեք են ներկայացնում Սարգիս Պիծակի վրձինած նկարները:

Կենդանի և խոսուն ստեղծագործություններ են նաև «Փարիսեցին», «Հայր լուսնոտր», «Կոյր Ղոկասու», «Կոյր Հովհաննու», «Մեծատան կինը», «Ղոկասու առակի այրին», «Հովհաննես Մկրտիչ» և ուրիշներ, որոնք Պիծակի վրձինի և ոճի մասին ցայտուն գաղափար են տալիս:

Ուրիշնյան մեծավաստակ նկարչի մանրանկարներն այսօր թանկագին ավանդ են և մեծ արժեք են ներկայացնում հայ ժո-

ղովարդի անցյալի մանրանկարչական արվեստը ուսումնասիրելու տեսակետից, միաժամանակ նկարչական մի դպրոց են հանդիսանում նրանք թիվ երիտասարդ նկարիչների և թիվ արվեստագետների համար:



Հակոբ թ. կաթողիկոս
Մանրանկար Սարգիս Պիծակի

(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

8. ՃՇՏՈՒՄՆԵՐ

Այստեղ անվերապահորեն ընդգծենք, որ տաղանդավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի արվեստի էության մասին, «Պատկերներ Հայաստանի արվեստի պատմությունից» խորագրով գրքում, Ռուբեն Դրամբյանի հաղորդած տեղեկություններն ու լուսաբանությունները ո՞չ միայն միակողմանի են, այլև սխալ:

«Պիծակը բավական միակերպ նկարիչ է, որը միևնույն ձևերն է օգտագործում, — գրում է Դրամբյանը:

Այս կտրուկ, եթե շահենք անարդար, տողերը պիտի բացատրել թերեւս նրանով, որ Դրամբյանն իր կարծիքն ու տպավորությունները հիմնավորել է Սարգիս Պիծակի

չորս աշխատությունների վրա, ինչպես ինքն է իր հոգվածում ընդգծել. «Մենք կարող ենք լրիվ պատկեր կազմել այդ բավականին միակերպ նկարչի մասին իր շորս աշխատանքներն երբեք չեն կարող որևէ նկարչի արվեստի մասին լրիվ և ցայտուն գաղափար տալ: Այդ տեսակետից Դրամբյանի մոտեցումը ո՞չ միայն սխալ է, այլև լուրջ և բարեխիղճ արվեստագետի վերլուծություն չէ:

Բայց խորանալով Ռուբեն Դրամբյանի գրում «միակերպ նկարիչ» համարված և միևնույն ձևերն օգտագործող Սարգիս Պիծակի մանրանկարների մեջ, դիտելով նրա

վրձինած կիլիկյան կերպարները՝ կեռն Դ. արքայի, ժամանակի Հակոբ կաթողիկոսի, Սարդուն թագուհու, Ներսես Շնորհալու, ոռուրինյան հովիվների, զինվորականների, անապատականների դիմանկարները, բնորոշ գաղափար ենք կազմում Դրամբյանի գրչով ընդգծված այն սիալ եղորակացության մասին, որ իր թե Սարգիս Պիծակի վրձինած «դեմքերը կաղապարված են կաղապարային ձևով, մեկը նման է մյուսին»։ Ընդհակառակը, նշված կիլիկյան կերպարներն ունեն տարրեր դեմքեր, տարրեր արտահայտություններ և պատկերում են հոգեկան տարրեր դրություններ։

Նույն երևույթը տեսնում ենք «կեռն Դ. ի դատաստանը» խորագուվ մանրանկարում։ Այստեղ վրձինված հինգ կերպարներից շորս դեմքերը բոլորովին իրար նման չեն, յուրաքանչյուր դիմապատկեր ունի իր որույն արտահայտությունը։ Կեռն Դ. արքայի դեմքի վրա իշխում է համալողի և իր տված արդար վճռի գործադրության սպասողի արտահայտությունը։ Կանգնած դատավորի դեմքի վրա կարդում ենք արդարությունը պատկերացնող կերպարի դիմանկարը։ Նրա ոտքերի տակ ընկնծված կնոջ դեմքի վրա դրոշմված է աղասողի և աղեքսողի արտահայտությունը։ Մյուս երկու նստած դատավորների դեմքերը պատկերում են նրանց զննող, պրատող և լարված հոգեկան դրությունը։ Եվ այդ բոլորի վրա որքան գեղեցիկ են իշխում խորհրդանշական երեք մատները։

Նշենք մի այլ էական երևույթ։ Ոճային նկարների մեջ պիտի որոնել գեղեցիկ դասավորում և ոճի պահպանում։ Այդպես է «Դատաստանը»։ Այդ մանրանկարով, որ ունի շատ գեղեցիկ դասավորություն, նկարիչը մի սիրուն համապատկեր է տվել։ Եվ դիտում ենք վրձինված տարրեր դիմանկարները և գաղափար կազմում Ռուբեն Դրամբյանի ստորագրած տողերի անձշտության մասին։ Այդ դիմապատկերների տարրեր արտահայտություններն ել ընդգծում են, որ Պիծակը տաղանդավոր դիմանկարի է։ Այդպես են նկարչի գծած մյուս դիմանկարներից շատերը, որոնք ոչ միայն արտահայտիլ են, յատկանշական, լրիվ վրձինված, այլև նրանց մեջ երևում է վարպետություն։

Եթե Սարգիս Պիծակի երկու ինքնանկարների մեջ նմանություններ կան, ոս պիտի համարել բնական երևույթ, որովհետև նման նկարները միշտ ել կարող են որոշ նմանություններ ունենալ։ Չնայած, որ Պիծակի ինքնանկարներում, կատարման տեսակետից, մեծ տարրերություն կա և դասավորումը հիացմունք է պատճառում։

Սարգիս Պիծակի արվեստը վերլուծելիս Դրամբյանն ընդգծել է նաև այսպիսի տողեր. «Աչքի խփում են մարդակազմական սխալները, միշտ շափաղանցրած կերպով մեծ են գլուխները»։

Զգեստը է մոռանալ, որ մարդակազմությունը մասնագիտական բնույթ ունի, իսկ ովային աշխատանքների մեջ նեղ, մասնագիտական մուտքում որոնելը սիալ է։ Դրամբյանն արվեստի վերլուծությամբ զրադշելիս մոռացել է, որ մանրանկարչության մեջ էականը, կարևորը նկարի ամբողջությունն (կոմպոզիցիան) է և ո՛չ թե կազմախոսությունը։ Սարգիս Պիծակի մանրանկարչական արվեստի մեջ նորացող արվեստագետը հենց առաջին հայացքից զգում է, որ նրա ստեղծագործությունները զարդարված են գեղեցիկ ժամանակությամբ, որոնք իրենց յուրահատուկ գծագրությամբ գրաւիլ են, ելք եթե նրա որոշ նկարներում կան մարդակազմական սխալներ, այդ երևույթը Դրամբյանին իրավունք չի տալիս թերացնահատելու Պիծակի արվեստի գեղեցկությունները։ Վերջապես, մի քանի համեմատաբար թույլ գործերով չի կարելի բնորոշել որևէ նկարչի արվեստը։ Այսօր ո՛չ ոք չի կարող ժիտել, որ տաղանդավոր գրաֆիկ նկարի Յակոբ Կողոյանն անատության շատ լավ գիտել, բայց փաստ է և այն, որ նրա որոշ նկարները մարդակազմության տեսակետից թերի են։ Դա, իհարկե, չի նշանակում, որ նա մարդակազմության մեջ թույլ է։ Նկատենք և այն, որ Սարգիս Պիծակի հենց թույլ նկատմած մանրանկարներում կա մի էական երևույթ, որ Դրամբյանն անուշադրության է մատնել։ Պիծակն իր նկարները վրձինելիս արվեստի ինսրին բնապատճական (նատուրալիստական) գծով չի մտածել, չի ձգտել կյանքի փաստերի մանրակրիտ ուսումնասիրության վրա հիմնված պատկերացնել իրականությունը, հենց այնպես, ինչպես կա։ Սա մի կարևոր պարագա է, որը պիտք է նկատի առնեն արվեստագետ քննադատները։

Սրբագրենք Ռուբեն Դրամբյանի մի այլ անարդար հայտարարությունը, թե Սարգիս Պիծակի արվեստում «միշտ շափաղանցրած կերպով մեծ են գրուները»։ Այս տողերի անձշտությունը հաստատում էն Պիծակի վրձինած բազմաթիվ մանրանկարների կերպարները։ Այս՝ դրանցից կեռն Դ. արքայի, դատավորների, Հակոբ Բ. կաթողիկոսի, Ներսես Շնորհալու, Մարիուն թագուհու, Ղուկասու Կուլյի, Գեորգ գորգալարի, Լուսնոտի Հոր, Փարիսեցիների և այլ բազմաթիվ կերպարների գլուխները, որոնք ո՛չ միայն շափաղանցրած կերպով մեծ»

չեն, այլև իրենց ներդաշնակ գծագրությամբ տպավորիչ են և հարազատ:

Այնուհետև Դրամբյանն ավելի խորացնելով իր սիսալները, Սարգիս Պիծակի մանրանկարների մասին հաղորդել է միանգամայն միակողմանի կարծիք՝ «Սարգիս Պիծակի մանրանկարները» (մինհատյուփները) համեմատաբար ավելի կոպիտ են, չոր և անկյանք): Այս տողերն արդյունք են շտապ եղբակացության: Այդ հանգամանքը պիտի զգա հենց Դրամբյանը, ներկա Սարգիս Պիծակի ո'չ թի չորս, այլ նրա մանրանկարների մեծ մասը լուրջ և բազմակողմանի կերպով բարեհաճի ուսումնասիրել: Նման աշխատանքի արդյունք են տաղանդավոր արվեստագետ Գարեգին Կաթողիկոսի, Հ. Ս. էփրիկյանի, Գ. Լեռնյանի կարծիքները, որոնք Սարգիս Պիծակին գնահատել են որպես «նշանավոր ու բազմաշխատ նկարիչ», «ժամանակի հայ նկարչաց, ուսկողաց և ծաղկողաց մեջ առաջին», «խոշորագույն մանրանկարիչ արվեստագետ», «ժողովրդական նկարագրով նկարչության» արտահայտիչ:

Լավագույն արվեստագետների գնահատական բնորոշումները ո'չ թի պատահականության, այլ խոր ու մանրակրկիտ վերլուծության արդյունք են: Եթե Դրամբյանն էլ մի օր բազմակողմանի և խոր կերպով ուսումնասիրի Սարգիս Պիծակի մանրանկարների գեղ մեծագույն մասը, անկասկած, պիտի համոզվի, որ նկարչի արվեստում իշխում է ո'չ միայն գեղեցիկ դասավորություն, ներդաշնակություն («արմոնիա»), խորք, այլև գեղարվեստական ձաշակ: Պիտի ըմբռնի, որ Սարգիս Պիծակի իր ժամանակի համապատասխան համարձակ վրձին ունի: Պիտի համոզվի, որ նրա ման-

րանկարները տպավորիչ են և արտահայտիչ, երևույթներ, որոնք նկարչի նկարներին իմաստ են տալիս, իսկ որպես մանրանկարիչ, գծանկարիչ, զարդանկարիչ և ոսկող նա իր դարաշրջանի խոշոր արվեստագետն է:



Հ Ա Ր Ի Բ

Մանրանկար Սարգիս Պիծակի

(Հայկ ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իր ստեղծագործական արվեստով Սարգիս Պիծակը հանդիսանում է Ռուբինյան դարաշրջանի ամենից իրապաշտ և ամենահայտնի մանրանկարիչներից մեկը, որի լավագույն գնահատական վկայականը տվել է հմուտ բանասեր Գարեգին կաթողիկոս Հովհաննեսի հետեւյալ տողերով.

«Խնչպես Թորոս Ռոսլինը Հովհաննեսի մեծ արվեստագետն է և փառքը զպրոցի, նույնը կարող ենք ասել Սարգիս Պիծակի համար Դրամբյակի և Սսի արքայական մեծ դպրոցի նկատմամբ («Նոր Գիր», 1944 թ., էջ 19):

Արդարեւ, Պիծակը ներկայանում է մեզ նկարչական հարուստ տվյալներով, նրբին արվեստով և ուժեղ անհատականությամբ

շժամած մի նկարիչ, որի մանրանկարչական արվեստի հանդեպ տածած անսահման սերը, նկարչական հմտությունն ու խորությունը և վարպետ ու ձևակերպված վրձինը նրա հմայիլ անունն արվեստի աշխարհում շուտով հռչակել են:

14-րդ դարաշրջանի այս պայծառ արվեստագետն իր ինքնաստիպ վրձինի բազմերանգ ստեղծագործություններով ո'չ միայն զարկ է տվել հայ միջնադարյան նկարչությանը, այլև փայլել է որպես մանրանկարիչ, գեղագիր, դիմանկարիչ, զարդանկարիչ և ոսկող: Կրոնական մոտիվների հետ վրձինը է նա կենդանի, խոսուն տիպարներ, գծելով գիտավորապես իր ապրած հարազատ միջավայրի ցայտում դեմքերը: Հատկանշա-

կան մի գիծ և— դա նրա որոշ նկարների հոգեբանական վերլուծությունն է: Նա կարողացել է իր պատկերած կերպարների հոգեբանությունը, նրանց խոհերը և էական հատկանիշները հմուտ գծագրությամբ արտահայտել: Ահա թե ինչո՞ւ նրա վրձինած դեմքերը պայծառ են, կենդանի և խոսուն: Այդ բոլորի վրա ավելացրեք նրա ինքնուրույն արվեստը, որ հատկանշական է իր բնորոշ գծերով, ձևերով և երանգներով: Այդպես են նրա թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական մանրանկարները, որոնք հարուստ են գեղարվեստական գծագրություններով: Նշենք նաև նրա բոլորովին ուրույն ոճը, որ պարզ է, որոշ, միաժամանակ գրավիչ և խորը: Առհասարակ, նրա ոճավորումները գեղեցիկ են, յատակ, շրջագծերն ուժեղ և գգայում: Ոճի այդ առանձնահատուկ բարեմասնության հետ ընդգծենք նրա նկարների բանաստեղծական տրամադրությունը: Նա

կարողացել է բովանդակության համապատասխան քնարական երանգ տալ իր մանրանկարներին: Ել չենք նշում նրա արվեստում իշխող մաքրությունը, ազնվությունը և պայծառությունը, երևությներ, որոնք նրա նկարների կառուցման հետ գեղեցիկ կերպով ներդաշնակում են: Ահա թե ինչո՞ւ Սարգիս Պիծակի մեկը մյուսից գրավիչ, խոսուն և գունագեղ նկարները Ռուբինյան դարաշրջանի հայ մանրանկարչության զարգացման հիմնական և ուրույն էջերը լուսարանող թանկագին հիշատակներ են, որոնք այսօր պայծառ ու ցայտուն զաղափար են տալիս Կիլիկյան մանրանկարչության արվեստի էության մասին, միաժամանակ ծանոթացնում են Պիծակի ինքնատիպ նկարչության, նրա գեղեցիկ ճաշակի, ոճի, ուղղության և ավեստի հիմնական գծերի հիտ, մի նկարիչ, որի վրձինով կարող է պարծենալ ամեն մի կուտուրական ժողովուրդ:

